

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ				
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները	Կարծիք
1	2	3	4	5
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	96.	«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի N1 և Վանաձորի N1 հատուկ հանրակրթական հաստատությունները տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը:	ՀՀ ԿԳ նախարարության ս/թ հունիսի 7-ի N01/10/7437-17 գրությամբ, ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու մասին» և «Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:	
	97.	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրության 8-րդ կետով հավանության արժանացած ռազմավարության մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության	ՀՀ ԿԳ նախարարության ս/թ մայիսի 17-ի թիվ 01/14/6434-17 գրությամբ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրության 8-րդ կետով հավանության արժանացած ռազմավարության մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը քննարկման է ներկայացվել շահագրգիռ գերատեսչություններին: Լրամշակված նախագիծը ՀՀ կառավարություն է ներկայացվել՝ ՀՀ ԿԳ նախարարության 2017-05-30 N01/14/6976-17 գրությամբ: Նկատի ունենալով, որ ՀՀ-ում պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի ս/թ մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2018-2019	

		աշխատակազմ ներկայացնելը	թվականների ճշգրտված և 2020 թվականի պետական բյուջեներից իրականացվելիք բյուջետային ծախսերի ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակները հաստատելու մասին» N02/23.16/11485-17 որոշմամբ ՄԺԾԾ 2018-2020 թվականների համար կրթության ոլորտի չափաքանակները զգալիորեն կրճատվել են, անհրաժեշտություն է առաջացել վերանայել ներկայացված ռազմավարությունը: Ուստի, առաջարկվում է նախագծի քննարկումը հետաձգել 2018-2020թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հաստատումից հետո:	
	98.	«Ձեռնարկատիրական կրթության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը	ՀՀ ԿԳ նախարարության ս/թ հունիսի 20-ի N01-07.2/8063-17 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել «Ձեռնարկատիրական կրթության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը: Նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմի դիտարկումներով վերադարձվել է քննարկելու և անհրաժեշտության դեպքում՝ լրամշակելու համար: Լրամշակված տարբերակը սահմանված նոր ժամկետում կներկայացվի ՀՀ կառավարություն:	

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը	Կարծիք
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	99.	Յուրաքանչյուր ուսումնական հաստատությունում բյուջեի և ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվության հանրային հասանելիության ապահովում	1) ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում կայքէջերի ստեղծում ՀՀ ԿԳ նախարարության 22.11.2016 N04/07.2/14988-16 գրությամբ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններին, ըստ ենթակայության, հանձնարարվել է ստեղծել և գործարկել անհատական կայքէջ: 2) ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում տարեկան բյուջեի և ծախսերի հաշվետվությունների հրապարակման ապահովում ՀՀ ԿԳ նախարարության 21.04.2017 N01/07.2/5170-17 գրությամբ ԿԳՆ ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններին հանձնարարվել է, իսկ Երևանի քաղաքապետարանին և մարզպետարաններին՝ առաջարկվել է	

			<p>ապահովել յուրաքանչյուրն իր ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների 2017 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունների տեղադրումը անհատական կայքէջերում:</p> <p>ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների անհատական կայքէջերում՝ http://schoolsite.am/ միջավայրում, 2017 թվականի մայիսի 2-ի դրությամբ տեղադրված են եղել 2017 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները:</p> <p>Երևանի քաղաքապետի՝ 2017 թվականի մայիսի 2-ի գրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2017 թվականի 1-ին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները տեղադրվել են Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am պաշտոնական կայքում:</p> <p>ՀՀ մարզպետարաններից ստացված գրությունների համաձայն՝ մարզային ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների անհատական կայքէջերում տեղադրված են 2017 թվականի առաջին կիսամյակի ֆինանսական հաշվետվությունները:</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարությունը պարբերաբար մշտադիտարկում է բոլոր դպրոցների կայքէջերը՝ գործընթացը տեսադաշտում պահելու և անհրաժեշտ տեղեկատվությունների հանրային հասանելիությունն ապահովելու համար:</p> <p>Հետագա աշխատանքները կընթանան համաձայն նախապես հաստատված ժամանակացույցի:</p>	
100.	Միջին բեռնվածության և թերբեռնված դպրոցների ֆինանսավորման նոր մեխանիզմի մշակում		<p>1) <u>ուսումնասիրել գործող օրենսդրական դաշտը և առկա պահին կատարված հետազոտությունները</u></p> <p>Միջին բեռնվածության և թերբեռնված դպրոցների ֆինանսավորման նոր մեխանիզմի մշակման համար ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբը: Աշխատանքային խումբը վերլուծել է հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի արդյունքում ծագող հիմնախնդիրները:</p> <p>2) <u>վերլուծել և սահմանել «միջին բեռնվածության դպրոց» և «թերբեռնված</u></p>	

			<p><u>դպրոց» հասկացությունները</u></p> <p>Վերլուծության արդյունքում խումբը ներկայացրել է մեթոդաբանության նոր առաջարկ՝ ներառելով ֆինանսավորման քաղաքականության բնագավառում որոշ նոր սկզբունքներ ու մոտեցումներ: ՀՀ ԿԳ նախարարության 28.03.2017 թիվ 01/07.1/4271-17 գրությամբ ՀՀ կառավարություն է ներկայացվել առաջարկվող մեթոդաբանությունը:</p> <p>3) <u>ուսումնասիրել ՀՀ-ում գործող նմանատիպ դպրոցների թիվը և պարզել՝ ինչպիսի խնդիրներ է առաջադնում դպրոցի ուսումնական և ֆինանսական գործընթացում</u></p> <p>Առաջարկվող ֆինանսավորման բանաձևի յուրաքանչյուր բաղադրիչի հաշվարկման ճշգրիտ ձևը նպատակահարմար է հստակեցնել հանրակրթական ուսումնական հաստատությունների օպտիմալացման գործընթացի ավարտից հետո:</p> <p>4) <u>մշակել ֆինանսավորման նոր մեխանիզմներ</u></p> <p>Մշակվել է ֆինանսավորման նոր բանաձև և «Հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N1262-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը կարծիքի է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան, «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամ, ինչպես նաև տեղադրվել է ՀՀ ԿԳ նախարարության կայքում և e-draft.am էլեկտրոնային հարթակում՝ հանրային քննարկման նպատակով: Լրամշակված նախագիծը ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ փորձագիտական եզրակացության:</p> <p>Վերոնշյալ որոշման նախագիծը կներկայացվի ՀՀ կառավարություն՝ հաշվի առնելով բոլոր շահագրգիռ կազմակերպությունների կողմից և հանրային քննարկման արդյունքում ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:</p> <p>Համաձայն ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 11-ի N29.6/[404812]-17 (19) նիստի արձանագրության 1.2) ենթակետի հանձնարարականի, ֆինանսավորման նոր մեխանիզմի մշակման համար սահմանվել է նոր ժամկետ՝ հուլիսի 11-ը:</p>	
--	--	--	---	--

	101.	Դպրոցի զարգացման ծրագրի կազմման մեթոդաբանության հաստատում և ներդնում	<p>1) <u>աշխատանքային խմբի ձևավորում</u> ՀՀ ԿԳ նախարարի 2016թ. դեկտեմբերի 2-ի N 1234-Ա/2 հրամանով ստեղծվել է համապատասխան աշխատանքային խումբ:</p> <p>2) <u>դպրոցի զարգացման ծրագրի կազմման ներկա իրավիճակի գնահատում</u> ՀՀ ԿԳ նախարարությունում հրավիրվել է դպրոցների զարգացման ծրագրի մեթոդաբանության մշակմամբ զբաղվող աշխատանքային խմբի խորհրդակցություն, որը վարել է ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը: Աշխատանքային խումբը հստակեցրել և որոշակիացրել է, զարգացման ծրագրի կառուցվածքը և բաղադրիչները: Խորհրդակցության ընթացքում ներկայացվել է «Դպրոց կենտրոնների միության» կողմից նախկինում մշակված դպրոցների զարգացման ծրագրի ուղղեցույցը, որը հիմք է ընդունվել մեթոդաբանության հետագա մշակման համար:</p> <p>3) <u>դպրոցի զարգացման ծրագրի կազմման մեթոդաբանության նախագծի մշակում</u> Ստեղծվել է առցանց հարթակ, որտեղ աշխատանքային խումբը, գնահատելով դպրոցի զարգացման ծրագրի կազմման ներկա իրավիճակը, ներկայացրել է առաջարկություններ Ծրագրի ուղղությունների և ուղեցույցի բաժինների վերաբերյալ: Ըստ ժամանակացույցի նախագիծը մշակվել է, և աշխատանքային խումբը ներկայացրել է դպրոցի զարգացման ծրագրի կազմման մեթոդաբանության նախագիծը:</p> <p>4) <u>հանրային քննարկումներ</u> Դպրոցի զարգացման ծրագրի կազմման մեթոդաբանության հիման վրա մշակվել է դպրոցի զարգացման ծրագրի նախագիծ, որը շրջաբերական նամակով ուղարկվել է ՀՀ մարզպետարաններ, առանձին հանրակրթական ուսումնական հաստատություններ:</p> <p>5) <u>դպրոցի զարգացման ծրագրի նախագծի լրամշակում</u> Անցկացվել են առանձին քննարկումներ նախագծի վերաբերյալ, ՀՀ մարզպետարաններից և առանձին հանրակրթական ուսումնական հաստատություններից ստացված առաջարկությունների հիման վրա դպրոցի զարգացման ծրագրի նախագիծը լրամշակվել է:</p> <p>6) <u>դպրոցի զարգացման ծրագրի նախագծի հաստատում</u> Նախագծի վերաբերյալ աշխատանքային խմբի քննարկումների</p>	
--	------	--	--	--

			<p>արդյունքում հստակեցվել է դպրոցի զարգացման ծրագրի վերաբերյալ դիրքորոշումը՝ դիտարկելով այն որպես հանրակրթական դպրոցի ներքին փաստաթուղթ, և վերանայվել է ՀՀ կառավարության կողմից այն հաստատելու հարցը: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 9-րդ կետերի համաձայն, դպրոցի զարգացման ծրագրին հավանություն է տալիս և դրա կատարումը վերահսկում է ուսումնական հաստատության խորհուրդը (այլ կերպ ասած՝ դրանք պետական ուսումնական հաստատության խորհրդի լիազորությունների շրջանակում են): Ելնելով նշված հիմնավորումներից, ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 23-ի N29.7/[410894]-17 հանձնարարականի առնչությամբ առաջարկվելու է ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության ծրագրի գերակա խնդիրներից ցանկից հանել 101-րդ կետը, քանի որ այն կորցրել է իր նպատակահարմարությունը՝ գերակա խնդիր լինելուց:</p>	
	102.	Նախակրթարանները 12-ամյա կրթության համակարգում (1+11) ներառելու արդյունավետության ուսումնասիրություն	<p>1) <u>միջազգային փորձի ուսումնասիրություն</u> Նախակրթարանները 12-ամյա կրթության համակարգում (1+11) ներառելու խնդրի առնչությամբ իրականացվել է միջազգային փորձի ուսումնասիրություն:</p> <p>3) <u>կրթության որակի վրա նախակրթարանը 12-ամյա կրթության համակարգում ներառելու հնարավոր ազդեցության գնահատում</u> Ուսումնասիրվել են Ազգային կրթական համակարգերի արդյունավետության վարկանիշավորման ցանկում /կրթական համակարգերի արդյունավետությունը գնահատվել է PISA, TIMSS ու PIRLS հետազոտությունների արդյունքներով և բնակչության կրթության մակարդակի աստիճանով/ ընդգրկված 40 երկրների կրթական համակարգերի առանձնահատկությունները՝ այդ թվում, 1-ին դասարան ընդունվող երեխաների տարիքի և միջնակարգ կրթության տևողության:</p> <p>2) <u>12-ամյա կրթության անցման արդյունքների վերլուծություն և</u> 4) <u>ոլորտի մասնագետների և շահագրգիռ կողմերի կարծիքների ընդհանրացում, ուսումնասիրության արդյունքների ամփոփում</u> Նշված երկու ենթակետերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել՝ ՀՀ ԿԳ նախարարության 07.04.2017 N 01/07-1/4607-17 և 10.05.2017 N01/07-1/5886-17 գրություններով:</p>	

103.	Գյուղական համայնքներում կրթության որակի և հեղինակության բարձրացմանն ուղղված ծրագրերի, հանրակրթական առարկաների ինքնուրույն սովորելու հնարավորության ընձեռում՝ տեսադասերի հասանելիությունն ապահովելու միջոցով	<p>1) <u>ինտերնետ հասանելիության կապի ապահովում՝ տեսադասերի հասանելիության նպատակով հայկական կրթական միջավայր (armedu.am) կայքի, ինչպես նաև այլ հարթակների միջոցով առցանց դասընթացների, պարապմունքների, մրցույթների, սովորողներին հետաքրքրող հարցերի և առաջադրանքների քննարկումների, ֆորումների կազմակերպում</u></p> <p>Գյուղական դպրոցների զարգացման հայեցակարգի շրջանակում հեռահաղորդակցային կապի միջոցով 2017 թվականի ապրիլ-մայիս ամիսներին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ընտրված մենթոր դպրոցները նախատեսվող ծրագրի պիլոտային փուլով իրականացրել են հեռավար դասեր՝ գործընկեր դպրոցների մասնակցությամբ: Ընտրված մենթոր դպրոցների ցանկին ավելացել է նաև Գյումրու թիվ 1 ավագ դպրոցը, որի գործընկեր դպրոցներն են Շիրակի մարզի Սիզավետի, Կրասարի և Ախուրիկի միջնակարգ դպրոցները: Դպրոցների համագործակցության նպատակով կիրառվել են առցանց դասեր, որոնք իրականացվել են http://lib.armedu.am/, http://handbook.ktak.am/, imdproc.am կայքերում տեղադրված էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ: Մենթոր դպրոցների կողմից անցկացվել է աշակերտների գիտելիքի ստուգում, կիրառելով հիմնականում առցանց թեստավորման միջոցով գնահատման տարբերակը:</p>	
104.	Բնագիտական առարկաների և մաթեմատիկայի տեսադասերի ապահովում՝ առնվազն 7-8-րդ դասարանների համար	<p>1) <u>առկա տեսադասերի և այլ ռեսուրսների գույքագրում</u></p> <p>ՀՀ ԿԳ նախարարության 09.02.2017 N04.07.2/2846-17 ելից գրությամբ շրջաբերական է ուղարկվել ՀՀ ԿԳՆ ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններ, ՀՀ մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումներ՝ տեղեկացնելու մարզային ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններին իրականացնել տեսադասեր բնագիտական առարկաներին, մաթեմատիկային վերաբերող էլեկտրոնային ռեսուրսների /http://lib.armedu.am/resource/, http://handbook.ktak.am/ կիրառմամբ և ՀՀ ԿԳ նախարարությանը տրամադրել ամփոփ տեղեկանք հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացրած տեսադասերի վերաբերյալ՝ համաձայն կցված ժամանակացույցի:</p>	

			<p>2) <u>Էլեկտրոնային ռեսուրսների օգտագործման ուղեցույցի մշակում և տրամադրում դպրոցներին</u> ՀՀ ԿԳ նախարարության Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից մշակվել և դպրոցներին են տրամադրվել բնագիտական առարկաներին և մաթեմատիկային վերաբերող տեսանյութերի, էլեկտրոնային ռեսուրսների օգտագործման ուղեցույցեր:</p> <p>3) <u>7-8-րդ դասարանների բնագիտական առարկաներին և մաթեմատիկային վերաբերող տեսանյութերի, էլեկտրոնային ռեսուրսների մշակում</u></p> <p>4) <u>Երևանի և ՀՀ մարզերի համապատասխան ստորաբաժանումներից տեղեկատվության հավաքագրում՝ ըստ հիմնական և միջնակարգ հանրակրթական դպրոցներում տեսադասերի անցկացման ժամանակացույցի</u> Նշված երկու ենթակետերի ուղղությամբ իրականացվել են հետևյալ աշխատանքները: Երևանի և ՀՀ մարզերի համապատասխան ստորաբաժանումներից իրականացվել է տեղեկատվության հավաքագրում՝ ըստ հիմնական և միջնակարգ հանրակրթական դպրոցներում տեսադասերի անցկացման ձևաչափի և ժամանակացույցի: Նշված ժամկետում ՀՀ ԿԳ նախարարությանը տրամադրվել է Երևանի քաղաքապետարանից և ՀՀ մարզպետարաններից երկրորդ ամփոփ տեղեկանք տեսադասերի անցկացման մասին: ՀՀ մարզպետարանների համապատասխան ստորաբաժանումների պատասխանատուները վերահսկում են տեսադասերի ապահովման, տարածման, անցկացման գործընթացը և ժամանակացույցի համաձայն՝ ներկայացնում են պահանջվող տեղեկատվությունը: Նախարարությունում ստեղծված է էլեկտրոնային բազա, որը ներառում է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվող տեսադասերի վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ:</p> <p>5) <u>ամենամսյա մոնիթորինգի կազմակերպում</u> ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների</p>	
--	--	--	---	--

			<p>ուսումնական գործընթացը գտնվում է ՀՀ ԿԳ նախարարության մշտադիտարկման կենտրոնում՝ անհրաժեշտ տեղեկատվություն հավաքագրելու համար: Հետագա աշխատանքները կընթանան՝ համաձայն նախապես հաստատված ժամանակացույցի:</p>	
	105.	<p>Կրթական ծրագրերի վերանայում՝ համապատասխանեցնելով արդի պահանջներին՝ ներառելով ձեռնարկատիրության և ֆինանսական կրթության տարրեր</p>	<p>1) <u>մասնագիտական խմբերի ձևավորում, որոնք անմիջականորեն կապված են կրթական տարրեր մակարդակների մեթոդաբանության, պետական չափորոշիչների և ծրագրերի մշակման հետ, պարտադիր և վերջնական արդյունքների, առաջարկությունների նորամուծությունների և ներառական ծրագրերի ներմուծում</u></p> <p>2) <u>լուրաքանչյուր ծրագրի համար առարկայական մասնագետների խմբի ձևավորում</u></p> <p>2016 թվականի նոյեմբերին հաստատված ՀՀ-ում ֆինանսական կրթման ազգային ռազմավարության (ՖԿԱՌ) 2014-2019 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում, ՀՀ ԿԳ նախարարի գրության հիման վրա և «Ֆինանսական կրթումը ուսումնական հաստատություններում» աշխատանքային խմբի ներքո ձևավորվել են աշխատանքային ենթախմբեր, որի կազմում ընդգրկված են ՀՀ ԿԳ նախարարության, Կրթության ազգային ինստիտուտի, Կենտրոնական բանկի, «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության ներկայացուցիչներ և ուսուցիչներ՝ հետևյալ 4 առարկաների մասով՝ «Ես և շրջակա աշխարհը», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» և «Հասարակագիտություն»:</p> <p>ՀՀ ԿԳ նախարարի մասնակցությամբ մի շարք քննարկումների արդյունքում որոշվել է ավելացնել ինտեգրման ենթակա ևս մեկ՝ «Տեխնոլոգիա» առարկան, որի համար ևս կազմվել է աշխատանքային խումբ:</p> <p>3) <u>ներկայացված նյութերի քննարկում և գնահատում</u></p> <p>Լրամշակվել են «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Ես և շրջակա աշխարհը», «Հասարակագիտություն», «Տեխնոլոգիա» առարկաների չափորոշիչներն ու ծրագրերը՝ ֆինանսական և ձեռնարկատիրական տարրերի ներդրմամբ: ՀՀ ԿԳ նախարարի շրջաբերական գրություններով դրանք ուղարկվել են բոլոր մարզերին, Երևանի քաղաքապետարանին, ոչ պետական և ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության ուսումնական հաստատություններին՝ քննարկելու,</p>	

			<p>դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու համար: Ստացված դիտողությունները քննարկվել են, նախագծերն անհրաժեշտության դեպքում լրամշակվել են և կներկայացվեն ՀՀ ԿԳ նախարարի հաստատմանը:</p> <p>4) <u>արդյունքների ամփոփում և շտկումների ներառում ծրագրերի նախագծում</u> Միևնույն ժամանակ, մշակվել են առարկաները դասավանդող ուսուցիչների վերապատրաստման մոդուլները, որոնք ներկայումս ուղարկվել են միջազգային փորձագետ Սելլա Ալաբիին՝ դիտարկումների: Անհրաժեշտության դեպքում դրանք կլրամշակվեն և ՀՀ ԿԳ նախարարության կողմից կերաշխավորվեն:</p> <p>Չուգահեռ, համակարգչի միջոցով պատահական ընտրվել են 16 դպրոցներ, որոնցում նախատեսվում է սեպտեմբեր ամսից սկսել փորձնական ծրագիր՝ «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Ես և շրջակա աշխարհը», «Հասարակագիտություն» առարկաների մասով: Օգոստոս ամսին կվերապատրաստվեն այդ դպրոցների շուրջ 64 ուսուցիչներ:</p> <p>«Տեխնոլոգիա» առարկան նախատեսվում է ներդնել հանրապետության բոլոր դպրոցների 2-4-րդ դասարաններում: Ստեղծվել է վերապատրաստման 52 կենտրոն, ընտրվել են 52 վերապատրաստող ուսուցիչներ, որոնք տարիների ընթացքում դասավանդել են «Տնտեսագիտություն» և «Ձեռնարկատիրական կրթություն» և բազմամյա փորձ ունեն: Ներկայումս մեկնարկվել է վերապատրաստողների վերապատրաստման գործընթացը, որը կավարտվի օգոստոս ամսին: ՀՀ բոլոր հիմնական և միջնակարգ դպրոցներից, այդ թվում՝ ոչ պետական, հավաքագրվել է շուրջ 1330 տեխնոլոգիայի ուսուցիչ, ձևավորվել են վերապատրաստման խմբերը՝ ըստ մարզերի:</p> <p>5) <u>Ֆինանսական կրթության ինտեգրման, ինչպես նաև ավագ դպրոցում առնվազն մեկ նոր առարկայական ծրագրի և չափորոշիչների մշակման մեկնարկ</u> Ավագ դպրոցում ձեռնարկատիրական կրթության ներդրումը կմեկնարկի 10-րդ դասարանից՝ «Տնտեսագիտություն» առարկայի ներդրմամբ, ինչ համար լրամշակվել և թարմացվել է</p>	
--	--	--	---	--

			<p>«Տնտեսագիտության» դասագիրքը, ստեղծվել է ուսուցչի ձեռնարկը: Սեպտեմբեր ամսից նախատեսվում է շուրջ 260 դպրոցում սկսել փորձնական ծրագիր:</p> <p>Վերը նշված գործընթացներն իրականացվում են ՀՀ կենտրոնական բանկի և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության հետ համագործակցությամբ: Մինչույն ժամանակ, մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարությանն է ներկայացվել «Ձեռնարկատիրական կրթության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության աշխատակազմի դիտարկումներով վերադարձվել է քննարկման և ահրաժեշտության դեպքում լրամշակման:</p> <p>6) <u>Ֆինանսական կրթության ներդրում տարրական, միջին և ավագ դպրոցներում՝ «Ես և շրջակա աշխարհը», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Հասարակագիտություն» առարկաներում</u></p> <p>Աշխատանքային խմբերում ընդհանուր ներգրավված են 12 մասնագետ, յուրաքանչյուր առարկայի գծով մեկ ֆինանսական և ձեռնարկատիրական կրթման մասնագետ, մեկ ֆինանսական ոլորտի փորձագետ և մեկ ուսուցիչ: Ընդգրկվել են նաև հոգեբան, աշխատանքները համակարգողներ ԿԲ-ից և ԿԳԼ-ից՝ ընդհանուր աջակցություն և մշակված փաստաթղթերը ՀՀ կրթական համակարգում գործող իրավական պահանջներին, հոգեբանական կանոններին համապատասխանելիությունը ապահովման նպատակով:</p>	
	106.	Արարատյան բակալավրիատի և կրթության գերազանցության ազգային ծրագրի ներառմամբ ազգային կրթակարգի վերջնական ձևավորում	<p>1) <u>հանրակրթական դպրոցներում «Արարատյան բակալավրիատ» ծրագրի մշակում և հաստատում</u></p> <p>Արարատյան բակալավրիատի և Կրթության գերազանցության ազգային ծրագրի ներառմամբ Ազգային կրթակարգի վերջնական ձևավորման և դրանից բխող Ազգային կրթակարգի նախագծի վերաբերյալ ՀՀ ԿԳ նախարարությունում տեղի է ունեցել քննարկում Համաաշխարհային բանկի ներկայացուցիչների հետ: Ելնելով քննարկման արդյունքներից՝ ձեռք է բերվել պայմանավորվածություն առարկայական չափորոշիչները և ծրագրերը մշակել Կրթակարգի</p>	

			<p>հաստատումից հետո: Առաջարկվել է քննարկել այդ գործընթացը համապատասխան կազմակերպությունների ուժերով իրականացնելու նպատակահարմարությունը (անհատ խորհրդատուների փոխարեն) և համաձայնության դեպքում կազմակերպել մրցույթ:</p>	
	107.	<p>Համընդհանուր ներառական կրթության ներդրում ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում</p>	<p>1) ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի հանրակրթական դպրոցների և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների շուրջ 5600 մանկավարժական աշխատողի վերապատրաստում</p> <p>1-ին եռամսյակում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցությամբ իրականացվող՝ «Խոցելի երեխաների սոցիալական ներառում. Երեխայի խնամքի համակարգի բարեփոխման շրջանակներում այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է վերապատրաստողների վերապատրաստում Լոռու մարզի 162 դպրոցների տնօրենների համար՝ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար թեմայով»: Ինչպես նաև վերապատրաստվել են 2012 ուսուցիչներ՝ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար» թեմայով, 30 ժամ տեսական և 30 ժամ գործնական մոդուլային ուսուցման դասընթացով: Համապատասխան վերապատրաստում են անցել նաև 2397 ծնողներ:</p> <p>«Հուլիսի կամուրջ» ՀԿ-ի աջակցությամբ «Միասին ապրել, միասին սովորել» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է վերապատրաստողների վերապատրաստում Տավուշի մարզի 81 դպրոցների տնօրենների համար՝ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար թեմայով»: Նաև վերապատրաստվել են Տավուշի մարզի 81 դպրոցների 2044 ուսուցիչներ և մանկավարժահոգեբանական թիմերի 215 մասնագետներ՝ «Ներառական կրթություն, կրթություն բոլորի համար» թեմայով, 30 ժամ տեսական և 30 ժամ գործնական մոդուլային ուսուցման դասընթացով: Համապատասխան վերապատրաստում են անցել նաև 1764 ծնողներ:</p> <p>Համապատասխան վերապատրաստում են անցել նաև «Հուլիսի Կամուրջ» ՀԿ-ի Տավուշի մարզի 4 գրասենյակների 52 մասնագետներ՝ «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների</p>	

			<p>կազմակերպման հմտություններ» թեմայով: Այնուհետև նշված մասնագետներն իրենց հերթին վերապատրաստել են Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժահոգեբանական թիմերին: 2-րդ եռամսյակում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցությամբ իրականացվող՝ «Խոցելի երեխաների սոցիալական ներառում. Երեխայի խնամքի համակարգի բարեփոխման շրջանակներում այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ երկու փուլով՝</p> <p>ս/թ ապրիլի 12-14-ը ՀՀ Լոռու մարզի Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան և Ալավերդի քաղաքներում կազմակերպվել է «ՀՀ Լոռու մարզի հատուկ հատուկ դպրոցների տարածքային մանկավարժական աջակցության կենտրոնների վերակազմակերպման գործընթացի» դասընթացի առաջին փուլը, իսկ ս/թ մայիսի 3-5-ը կազմակերպվել է վերապատրաստման դասընթացների 2-րդ փուլը: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել է ընդհանուր թվով 85 մասնագետ:</p> <p>2) <u>ՀՀ Լոռու մարզի 3՝ Սպիտակի, Վանաձորի և Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններից 158 սովորողի տեղափոխում հանրակրթական դպրոց, ՀՀ Լոռու և Տավուշի մարզերի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրագույն չափաքանակի սանդղակի կիրառում՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների և ուսուցչի օգնականի հաստիքի ներդրում</u></p> <p>Մինչույն ժամանակ ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրումն ապահովելու նպատակով, քայլեր են ձեռնարկվել նշված մարզերում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների ստեղծման ուղղությամբ: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N10-Ն որոշմամբ՝ «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպվել</p>	
--	--	--	--	--

			<p>է, և բաժանման ձևով ստեղծվել են «Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն», «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները: Ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2017 թվականի մարտի 1-ի N20-Ա/2 հրամանով ստեղծվել է հանձնաժողով՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների հաստատման և պետական գրանցման աշխատանքները կազմակերպելու նպատակով:</p> <p>ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N141-Ն որոշմամբ հաստատվել է հանրակրթական հիմնական պետական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի: Նույն որոշմամբ 2017 թվականի սեպտեմբերի 1-ից ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը հաստատելու մասին» N46-Ն որոշումը: Նոր սանդղակը ներդրվել է ՀՀ Սյունիքի մարզում 2017 թվականի հունվարի 1-ից, Լուռու և Տավուշի մարզերում ներդրվելու է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ մնացյալ մարզերում՝ համաձայն որոշմամբ սահմանված ժամանակացույցի:</p> <p>ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ իրականացվող «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» ծրագրի նախապայմանների համաձայն, մշակվել և ԱՄՆ ՄԶԳ համաձայնեցման է ներկայացվել 2017 թվականի միջոցառումների իրականացման պլանի և բյուջեի նկարագրական փաթեթը:</p> <p>ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ իրականացվող «Ներառական կրթության</p>	
--	--	--	---	--

			<p>համակարգի հզորացում Հայաստանում» ծրագրի նախապայմանների համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» դրամաշնորհային ծրագրի արտաբյուջետային հաշվի միջոցների ծախսման 2017 թվականի նախահաշիվը հաստատելու, ՀՀ 2017 թվականի պետական բյուջեում և ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N1313-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի լրամշակված տարբերակը, ինչպես նաև արտաբյուջետային հաշվի միջոցներով 2017 թվականին ձեռքբերվող ապրանքների/գույքի/ գնային և քանակական հիմնավորումները: ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 07.06.2017 թիվ 01/10/7437-17 գրությամբ, ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու մասին» և «Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը:</p> <p>Դուրսբերման նպատակով գնահատվել են «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն», «Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոց» և «Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N 1 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ներում սովորող 100 երեխաներից 95-ը, որոնք սեպտեմբեր ամսին տեղափոխված կլինեն հանրակրթական դպրոցներ:</p> <p>Տարածքային մականավարժահոգեբանական աջակցության կենտրոնների և «Հույսի Կամուրջ» ՀԿ-ի Տավուշի մարզի 4 գրասենյակների մասնագետները աջակցություն են ցուցաբերել հանրակրթական դպրոցներին՝ իրականացնելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ առաջին մակարդակի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումները:</p>	
	108.	Իննամյա կրթությունից անցում 12-ամյա պարտադիր	1) նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ընդունելության գործընթացի իրավական դաշտի	

		<p>կրթության՝ ներառյալ մասնագիտական</p>	<p><u>կանոնակարգում</u> Շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցնելուց և հանրային քննարկման դրվելուց հետո «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագիծը 24.05.2017թ. N01/08.1/6691-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը: Նախագծի հաստատումից հետո մեկնարկ կտրվի ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. ապրիլի 5-ի «Հայաստանի Հանրապետության նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու մասին» թիվ 254-Ն հրամանում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու գործընթացին:</p>	
	<p>109.</p>	<p>Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխման նպատակով անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման օրենսդրական նախադրյալների ստեղծում և բարձրագույն կրթության ֆինանսական նոր մեխանիզմների մշակում</p>	<p>1) <u>բուհական անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման և գործառնության միջազգային ու տեղական փորձի ուսումնասիրում (գեկույցի պատրաստում)</u> ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի N1284-Ա/2 հրամանով ստեղծվել է «Բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխման նպատակով անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման օրենսդրական նախադրյալների ստեղծման և բարձրագույն կրթության ֆինանսավորման նոր մեխանիզմների մշակման նպատակով» աշխատանքային խումբ: Աշխատանքային խմբում ընգրկվել են ՀՀ ԿԳ նախարարության աշխատակազմի և բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ: Աշխատանքային խմբի կողմից ուսումնասիրվել է անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման և գործունեության, ինչպես նաև բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի միջազգային փորձը:</p> <p>2) <u>բուհական անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման իրավական հիմքերի և բուհերի հնարավորությունների ուսումնասիրում (գեկույց)</u> ՀՀ ԿԳ նախարարությունը շահագրգիռ կողմերի հետ քննարկել է բուհական անձեռնմխելի ֆոնդերի ձևավորման սկզբունքների և օրենսդրական նախադրյալների ստեղծման վերաբերյալ նախագիծը և</p>	

			<p>ս/թ հունիսի 9-ի N01/06/7637-17 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել նախագծի լրամշակված տարբերակը՝ առաջարկելով նաև ՀՀ կառավարության աշխատակազմում իրականացնել քննարկում ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացուցիչների հետ՝ նախագծի իրագործման ճանապարհային քարտեզի ստեղծման և իրականացման շուրջ:</p> <p>3) <u>բուհական անձեռնմխելի ֆոնդերի գործառնության սկզբունքների մշակում և ուղղակի շահառուների (բուհեր, բանկեր) հետ քննարկում (տեղեկանք)</u></p> <p>ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 1060-Ա որոշմամբ հաստատվել է ՀՀ կառավարության ծրագիրը, համաձայն որի «Կրթություն և գիտություն» բաժնի բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում սահմանված բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարեփոխման նպատակով կիրականացվի անցում ֆինանսավորման պետական պատվերից նպատակային և կրթաթոշակային ֆինանսավորման: Այդ նպատակով պետական բարձրագույն ուսումնական հաստատություններից հավաքագրվել և մշակվել է վերջիններիս գործունեության ֆինանսական տվյալները: Նախատեսվում է մշակել 3 տարբեր մոդելներ, որոնցով տարբեր կանխատեսումներով կներկայացվեն կրթաթոշակային ֆինանսավորման առավել արդյունավետ տարբերակներ: Մոդելների իրագործման պարագայում նախատեսվում է իրականացնել փոփոխություն ՀՀ կառավարության 2006 թվականի 1183-Ն որոշմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու» մասին կարգում:</p>	
	110.	Բուհ-գիտահետազոտական կազմակերպություն համագործակցության ապահովման հնգամյա գործընթացի սկիզբ	<p>1) <u>ցանցային համալսարանների մոդելների ուսումնասիրություն (գեկույցի պատրաստում)</u></p> <p>ԲՈՒՀ-գիտահետազոտական կազմակերպություն համագործակցության ապահովման և ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերների ձևավորման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 13.12.2016թ. N1283-Ա/2</p>	

			<p>հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ: 20172. մայիսի 5-ի NԴ-13436-17 գրությամբ աշխատանքային խմբի ղեկավարի կողմից ՀՀ ԿԳ նախարարություն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերների ձևավորման հայեցակարգի» նախագիծը, որտեղ ներկայացված են բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական ու գիտահետազոտական կազմակերպությունների մասնակցությամբ ցանցային համալսարանների և գիտակրթական կլաստերների ձևավորման կարգն ու պայմանները, սահմանված են դրանց գործունեության հիմնական ուղենիշները, ֆինանսավորման սկզբունքները և աղբյուրները:</p>	
	111.	Դպրոցահասակ երեխաներին կայուն սննդով ապահովման համակարգի ընդլայնում	<p>1) <u>ՀՀ Տավուշի մարզում հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և դպրոցին նախապատրաստման խմբերի (նախակրթարանների) 6157 աշակերտի սննդով ապահովման գործընթացի համակարգում</u> ՀՀ ԿԳ նախարարության, Տավուշի մարզպետարանի և ՄԱԿ-ի ՊՀԾ-ի հետ համատեղ աշխատանքներ են ընթացել մարզը Ազգային ծրագրին նախապատրաստելու համար: Կազմակերպվել են համատեղ քննարկումներ: 2) <u>դպրոցական սնունդ ծրագրում ընդգրկված 400 մասնագետի վերապատրաստում</u> Տավուշի մարզի ուսումնական հաստատությունները Ազգային ծրագրի իրականացմանը նախապատրաստելու համար իրականացվել է ընդհանուր թվով 75 դպրոցների տնօրենների վերապատրաստում: Դպրոցների խոհարարների և խոհանոցների աշխատակիցների (օգնականների) վերապատրաստումը նախատեսվում է իրականացնել ս/թ սեպտեմբեր ամսվա առաջին կեսին: 3) <u>ՀՀ Տավուշի մարզի 25 դպրոցի ենթակառուցվածքների (խոհանոց, ճաշարան) կարգավորման աշխատանքների համակարգում</u> Տավուշի մարզի 26 դպրոցներում վերանորոգման աշխատանքներն ավարտվել են, իսկ 28-ում, որից 7-ը քաղաքային դպրոցներ են, վերանորոգման աշխատանքները դեռևս ընթացքում են: Դպրոցների կարիքների գնահատման աշխատանքների ընթացքում պարզվել է, որ 7 դպրոցների ենթակառուցվածքները գտնվում են բավարար</p>	

			<p>վիճակում, իսկ 14 դպրոցներ ունեն հիմնովին վերանորոգման կարիք: Այս պահի դրությամբ այդ դպրոցների ենթակառուցվածքների վերանորոգման համար անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցներ (դոնորների) գտնելու աշխատանքներ են ընթանում: Այնուամենայնիվ, եթե վերանորոգումներ չիրականացվեն, ս/թ սեպտեմբերի 1-ին այս դպրոցներում ծրագիրը նույնպես կմեկնարկի, սակայն ոչ բավարար պայմաններում:</p> <p>4) <u>«Տավուշի մարզի 75 դպրոց անհրաժեշտ խոհանոցային սարքավորումներով և ճաշարանային գույքով ապահովելու գործընթացի համակարգում</u></p> <p>Հանրակրթական դպրոցները անհրաժեշտ խոհանոցային սարքավորումներով և ճաշարանային գույքով ապահովելու նպատակով գնումների գործընթացը ընթացքում է: Տավուշի մարզի 75 դպրոցներից 61-ին մինչև ս/թ հուլիս ամսվա վերջ կտրվեն խոհանոցային սարքավորումներ և ճաշարանային գույք: 14 դպրոցների սարքավորումների և գույքի մատակարարման հարցը առկա է՝ պայմանավորված այս պահին դրանց վերանորոգման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությամբ:</p>	
--	--	--	--	--